



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 19 ՅՈՒՆԻՍ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն ՎԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՒ ԽՍՕՒԼ ԵՒ գործել առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 103

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

Օրինաբանէ Տէրը, ո՛վ իմ անձս,
եւ մի՛ մոռնար անոր բոլոր բարիքները:
Ան է որ կը քաւէ բոլոր մեղքերդ,
կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ:
Ան է որ կեանքդ կը փրկէ կորուստէն,
եւ իր սիրովն ու գթութեամբը կը պարուրէ քեզ:
Ան է որ բարիքներով կը լեցնէ քու կեանքդ,
այնպէս՝ որ միշտ երիտասարդ մնաս, արծիւներուն պէս:
Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ,
անպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ,
որովհետեւ ինք լաւ գիտէ մեր կազմուածքը,
եւ չի մոռնար որ հողեղէն ենք:
Արդարեւ մարդուս կեանքը խոտի կը նմանի,
կը ծաղկի այնպէս՝ ինչպէս վայրի ծաղիկը.
Երբ խորշակը անոր վրայ կը փչէ՝
ալ կը դադրի գոյութիւն ունենալէ,
անոր տեղն իսկ չեա գիտեր:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ է՛ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ է՛ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆ ԵՎ ՄԱՐԿՈՍ

1:17-25

ՍՐԲՈՒԹԵԱՄԲ ԱՊՐԵԼՈՒ ԿՈՉ (1:17-25)

Աստուած ոչ միայն սրբութեան կոչումը փութաւ, այլ նաեւ Իր Սուրբ Հոգիին միջոցաւ գինք իբրեւի Հայր ճանչնալու շնորհքը: Երբ աշակերպները խնդրեցին որ մեզի աղօթել սորվեցուր Քրիստոս այսպէս սորվեցուց. «Հայր մեր»: Հայրութեան կոչումին մէջ կայ նաեւ մեր որդիութեան պարտականութիւնը, ինչպէս պիտի ըսէ Մաղաքիա մարգարէին. «Եթէ ես հայր եմ, իմ պապիս ո՛ր է, եթէ փէր եմ, իմ երկիրս ո՛ր է» (1:6): Այսպէս էս Պետրոս Առաքեալ նոյն կոչը կը յիշեցնէ հաւատարմութեամբ, որ եթէ զԱստուած Հայր կը կոչէք, որ նաեւ իբրեւ արդար Դատարար անաչառ կերպով կը դատէ իւրաքանչիւրը իր գործերուն համաձայն, ուրեմն «աստուածավայելութեամբ ապրեցէք ձեր պանդխտութեան փարիները» (17 հմբ): Ինչո՞ր այդպէս ապրիլ: Որովհետեւ ալ իրենք իրենց անձերուն փէրը չեն, այլ Քրիստոս որ փրկագնով զիրենք գնեց մեղքի ստրկութենէն, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ: Այսպէս էս Պետրոս Առաքեալ կ'ըսէ. «դուք փրկուեցաք ձեր ունայն, փուճ կենցաղէն ոչ թէ կորստական ոսկիով կամ արծաթով, այլ անբիժ եւ անարար Գառնուկին՝ Քրիստոսի թանկագին արիւնով»: Անցեալի գառնուկը, որ փրուած էր անապատին մէջ ուրիշ բան չէր եթէ ոչ պարզապէս շուքը գալիք իսկական ու ճշմարիտ Գառնուկին, որուն համար Յովհաննէս Մկրտիչ պիտի ըսէ. «Ահա Աստուծոյ Գառը որ եկած է վերցնելու աշխարհի մեղքը» (Յովի 1:29): Ինչո՞ր արիւնով: Որովհետեւ արիւնը կը խորհրդանշէր կեանքը, իսկ որովհետեւ առաջին մարդը երբ մեղանչեց այդ մեղանչումը պարճառ դարձաւ անոր մահուան: Աստուծոյ պատուէրը յարակ էր, այն օրը որ ուրեւ պիտի մեռնիս: Մեղքին վարձքը մահ է: Ուրեմն կը նշանակէ մեղքի պարճառով մարդուս կեանքն է որ խլուեցաւ, ուրեմն ինչով կարելի է այդ կեանքը ետ վերագնել, եթէ ոչ ուրիշ կեանքով: Ահա այդ կեանքի փոխարէն Քրիստոս եկաւ Իր իսկ կեանքը փախու իբրեւ փրկանգին:

«Անիկա աշխարհի սրեղծումէն իսկ առաջ ընտրուած էր» (20 հմբ) ընտրուած էր ըլլալու այդ Գառնուկը: Գառնուկ մը որ պէտք է ըլլայ անբիժ ու անարար, որպէսզի կարենար քաւութիւն բերել: «Բայց ժամանակներուն վերջաւորութեան երեւցաւ մեզի համար» (20 հմբ): Ժամանակներու վերջաւորութեան կը նշանակէ յարմար ժամանակին, ժամանակներու լրումին:

Պետրոս Առաքեալ յարակօրէն կը ներկայացնէ, թէ միայն Քրիստոսով կարելի է հաւատարմ Աստուծոյ, ճանչնալ զԱստուած: Այնպէս ինչպէս Քրիստոս Ինք պիտի ըսէր. «Առանց ինձի դուք չէք կրնար Հօրս երթալ»: Յարուցանեց Քրիստոսը, որպէսզի դուք ձեր հաւատքն ու յոյսը Աստուծոյ կապէք (21 հմբ): Եւ ահա այդ ճշմարտութեամբ սրբեցիք ձեր անձերը, եւ այդ սրբութիւնը կրնանք ձեռք ձգել հնազանդելով Աստուծոյ, միւս կողմէ այդ սէրը արտայայտելու եղբայրսիրութեամբ, իրար սիրելով մաքուր սրտով: Ինչպէս Քրիստոս պիտի ըսէ. «Սիրեցէք իրար ինչպէս ես ձեզ սիրեցի», կամ Յովհաննէս Առաքեալ պիտի ըսէր. «Եթէ եղբայրդ չես սիրեր, որ կը տեսնես, ինչպէս կրնաս սիրել զԱստուած որ չես տեսներ» (Ա Յովի 4:20): Որովհետեւ Քրիստոս կ'ըսէ. «Ձեր իրար սիրելով է որ կը ճանչցուիք իբրեւ իմ աշակերպներս» (Յովի 13:35):

«Որովհետեւ Աստուծոյ կենդանի եւ մշտնջենական խօսքով վերստին ծնաք, իբրեւ զաւակներ ոչ թէ մահկանացու ծնողքի մը, այլ՝ անմահ»: Այլապէս, Պետրոս Առաքեալ մէջբերելով Եսայի մարգարէէն հարուածը, մարդուս կեանքը կը նմանի խոտի եւ վայրի ծաղիկի, որ շուտով կը չորնայ ու կը թաքամի, բայց Աստուծոյ խօսքը կը մնայ յաւիտեան: Եւ այդ խօսքն էր որ քարոզուեցաւ, Աւետարանը, Բարի լուրը:

